Տարբերել ճշմարտությունը կեղծիքից

Ավետարանի բոլոր տնտեսություններում չար ուժերը հակադրվել են Աստծուն և Նրա աշխատանքին: Սակայն Աստծո աշխատանքը չի խափանվի: Այս վերջին օրերում սարից կտրվել է մի քար, և այն «կգլորվի մինչև որ լցնի ողջ երկիրը» (ՎԱՈՒ 65.2): Այնուամենայնիվ, քանի որ Եկեղեցու առանձին անդամներ կարող են մոլորվել, մեզանից յուրաքանչյուրը պետք է «արթուն կենա և միշտ աղոթի» (3 Նեփի 18.18):



«Այս լուսավորության դարաշրջանում, երբ ավետարանի ամբողջականությունը վերականգնվել է, դուք և ես կարիք չունենք ճամփորդելու անհայտ ծովերով և ճանապարհներով՝ ճշմարտության փնտրտուքներում: Սիրող Երկնային Հայրը գծել է մեր ուղին և տվել հուսալի ուղեցույց, այն է՝ *ինազանդությունը:* Ճշմարտության գիտելիքը և մեր մեծագույն հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք ինազանդ ենք Աստծո պատվիրաններին» (Թոմաս Ս. Մոնսոն, «Ինազանդությունը օրհնություններ է բերում», Ensign կամ *Լիահոնա,* մայիս 2013, 89):

«Իմ սիրելի ընկերներ, խնդրում եմ առաջին հերթին ձեր կասկածները կասկածի տակ դրեք, հետո նոր ձեր հավատքը: Մենք երբեք չպիտի թույլ տանք, որ կասկածը մեզ գերի դարձնի և մեզ հետ պահի աստվածային սիրուց, խաղաղությունից և պարգևներից, որոնք ստանում ենք Տեր Հիսուս Քրիստոսի հավատքով» (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Եկեք, միացեք մեզ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2013, 23):

«Սատանան մեծ մոլորեցնողն է, «եղբայրների չարախօսը» [Հայտնություն ԺԲ.10], բոլոր ստերի հայրը [տես Հովհաննես Ը.44], ով մշտապես փորձում է խաբել, որ կարողանա մեզ տապալել [տես ՎԱՈՒ 50.3]: . . .

Նույնիսկ նրանց համար, ովքեր արդեն ընդունել են ճշմարտությունը, սատանայի հիմնական ռազմավարությունը կայանում է կասկածի սերմեր տարածելու մեջ: Օրինակ, նա դրդել է Եկեղեցու շատ անդամների սայթաքել, երբ նրանք բացահայտել են Եկեղեցու մասին տեղեկություն, որը կարծես հակասել է նախապես իրենց սովորածին:

Երբ ձեզ մոտ նման պահեր են լինում, հիշեք, որ տեղեկատվության այս ժամանակաշրջանում շատերը կան, ովքեր կասկածներ են ստեղծում ցանկացած բանի և ամեն բանի վերաբերյալ, ցանկացած պահի և ամեն վայրում: . . .

. . . Եվ լավ կլինի միշտ հիշել, որ լոկ այն փաստը, որ եթե մի բան տպագրված է թերթում, հայտնվում է համացանցում, հաճախակի կրկնվում է կամ ունի հետևորդների մեծ խումբ, չի դառնում ճշմարիտ:

Երբեմն կեղծ պնդումները կամ տեղեկություններն այնպես են ներկայացվում, որ բավականին հավաստի են թվում: . . .

. . . Այն, ինչ այժմ հակասական է թվում, կարող է լիովին հասկանալի դառնալ, երբ մենք փնտրենք և ստանանք ավելի շատ վստահելի տեղեկություններ» (Dieter F. Uchtdorf, "What Is Truth?" [Church Educational System devotional, Jan. 13, 2013], lds.org/broadcasts).

«Երբ մենք սկսում ենք չափել ժամանակակից սովորությունները և առաջարկներն ըստ Աստծո ծրագրի վերաբերյալ մեր գիտելիքների և Աստծո խոսքում տրված նախադրյալների և Նրա ապրող մարգարեների ուսմունքների, . . . մենք գիտենք, որ սա ապահով հող է ստեղծում մեզ համար հավերժորեն» (Dallin H. Oaks, "As He Thinketh in His Heart" [evening with Elder Dallin H. Oaks, Feb. 8, 2013], lds.org/broadcasts):

«Վախի, կասկածի կամ մտահոգիչ ժամանակներում կանգնեք այն հիմքի վրա, որն արդեն ունեք, նույնիսկ, եթե այդ հիմքը սահմանափակ է: . . . Երբ այդ պահերը գան ու խնդիրներ ջրի երես ելնեն, որոնց լուծումն անմիջապես չի ստացվում, *ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, մինչև որ լրացուցիչ գիտելիքներ կգան»* Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաատում եմ, Տեր», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2013, 94):

«Մենք կարող ենք անկեղծ հետաքրքրվողին հիշեցնել, որ ինտերնետային տեղեկությունը չունի «ճշմարտության» ֆիլտր: Եկեղեցու մասին որևէ տեղեկություն, անկախ նրանից, թե որքան համոզիչ է, պարզապես ճշմարիտ չէ» (Նիլ Լ. Անդերսեն, «Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2014, 29):

«Հոգևոր հարցերի պատասխանները տրվում են այն անհատներին, ովքեր չեն կարծրացնում իրենց սրտերը, ովքեր հարցնում են հավատքով, հավատալով, որ իրենք կստանան, և ովքեր ջանասիրաբար պահում են պատվիրանները» (Paul V. Johnson, "A Pattern for Learning Spiritual Things" [Church Educational System address to religious educators, Aug. 7, 2012], si.lds.org):

«Եկեղեցու ուսումնասիրումը . . .այն լքողների օգնությամբ նման է Հիսուսին հասկանալու համար Հուդայի հետ հարցազրույց անցկացնելուն» (Neal A. Maxwell, "All Hell Is Moved" [Brigham Young University devotional, Nov. 8, 1977], 3, speeches.byu.edu):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐՊԱՀՊԱՆՎԱԾ ԵՆ: